«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ



“ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ” ՓԲԸ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

Մեր վարվեցողության կանոնագիրքն իր մեջ ներառում է գործարար վարվեցության էական կանոնները, որոնք մեզ կառաջնորդեն վիճելի և դժվար հարցերում: Սույն կանոնագիրքը նաև ներառում է մեր հանձնառությունը մեր ընկերության հիմնական արժեքների պահպանման նկատմամբ:

Սույն կանոնագրքին հետևելը շատ կարևոր է մեր ընկերության համար, ուստի կոչ եմ անում, որ մեզնից յուրաքանչյուր ոք բարձր պատասխանատվությամբ մոտենա այն գործողություններին, որոնք ուղղված են պահպանելու մեր ընկերության բարի համբավը, բարձր որակ ապահովելուն, ինչպես նաև մեզնից ակնկալվող արդյունքները ցուցաբերելուն:

Տնօրեն՝ Ա. Հարությունյան

Մարդեր



ԻՆՉՊԵՍ ՀԱՍՆԵԼ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ

Էյ-Էն Աուդիտ
AN Audit

1. Գործել մասնագիտորեն
2. Համագործակցել միմյանց հետ
3. Պատվիրատուների հետ պահպանել սերտ գործարար հարաբերություններ և ցուցաբերել հարգալից վերաբերմունք
4. Պահպանել օբյեկտիվությունը և անկախությունը
5. Դիտարկել մեր գործողությունները՝ էթիկայի տեսանկյունից:

ԳՈՐԾՈՒՄ ԵՆՔ ՄԱՍՆԱԳԻՏՈՐԵՆ

1. ՄԱՏՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ “ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ” ՓԲԸ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ և ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:
2. ՄԱՏՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՅՆ ԱՁՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԱՏՈՒՑԵԼ ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
3. ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵ ՄԵՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՁՆԻՎ ԳԻՆ
4. ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՆՔ ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՝ ԿԱՊՎԱԾ ՄԵՐ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ, ՄԵՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ և ԲՈԼՈՐ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ, ՈՐՈՆՑ ԵՀՏ ԾԱՎԱԼՈՒՄ ԵՆՔ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5. ՁԳՏՈՒՄ ԵՆՔ ԽՈՒՍԱՓԵԼ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԻՑ: ՆՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵԹԵ ՄԵՆՔ ՀԱՄՈԶՎԱԾ ԵՆՔ, ՈՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՆՁԱՆՑ ՇԱՀԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՊԱՏՇԱՃ ԸՆԹԱՑԱԿԱԳԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ, ԱՊԱ ՄԵՆՔ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՆՔ ԼԻՆՈՒՄ ՆՄԱՆ ՔԱՅԼԵՐԻՆ:
6. ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՄՏՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ՄԵՆՔ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ և ԱՅԼ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՎԱՏԸ ՄԵՐ ՆԿՏԱՄԱՄԲ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ ՀԵՏԵԼԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ: ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՄԵՆՔ ՄԻՇՏ ՀԱՄՈԶՎՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳՎԱԾ ՉԷ:
7. ԴԺՎԱՐ ԿԱՄ ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԽՎԵԼԻՍ, ՄԵՆՔ ՄԻՇՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ ԵՆՔ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՏ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ՄԻՆՉ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼԸ:
8. ՄԵՁ ՀԱՄԱՐ ԱՆԸԴՆՈՒՆԵԼԻ Է ՄԻՋՆՈՐԴԵԼ, ԽՈՍՏԱՆԱԼ, ԸՆԴՈՒՆԵԼ ԿԱՄ ՎՃԱՐԵԼ ԿԱՇԱՌՔ:

ՄԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ

1. Կառուցում ենք միմյանց հետ հարաբերություններ՝ փոխադարձ հավատի և վստահության վրա հիմնված, այնպես, որ մեզնից յուրաքանչյուրը գիտակցում է իր անձնական պատասխանատվությունը ՃԻՇՏ քայլեր ձեռնարկելու համար:
2. Պարտավորվում ենք հաղորդակցվել միմյանց հետ ազատ և ազնվորեն:
3. Քարոզում ենք ազնվություն, հարգանք և թիմային ոգի:
4. Խրախուսում և օժանդակում ենք մեր թիմակիցների մասնագիտական աճը՝ շարունակական ուսուցման և խորհրդակցության միջոցով:
5. Շարունակաբար գնահատում ենք մեր աշխատակիցների աշխատանքը

ՄԵՆՔ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Յանկացած իրավիճակում պահպանում ենք մեր անկախությունը և օբյեկտիվությունը՝ գիտակցելով դրա նշանակալիությունը մեր մասնագիտական պարտականություններն իրականացնելիս
2. Գործին մոտենում ենք մասնագիտական կասկածամտությամբ
3. Չենք ընդունում որևէ վճար կամ արժեքավոր իրեր, եթե դա կարող է դիտարկվել որպես մեր եզրահանգումների և խորհրդատվության վրա ազդած միջոց
4. Չենք մտնում այնպիսի փոխհարաբերությունների մեջ, որոնք կարող են վտանգել մեր օբյեկտիվությունը և անկախությունը

Ինչպես ենք մենք **որոշումներ** կայացնում և

քայլեր ձեռնարկում...

Դիտարկում ենք ընթացիկ իրավիճակը

Արդյո՞ք դա օրինական է

ՈՉ → Հրաժարվում կամ մերժում ենք

ԱՅՈ

Արդյո՞ք մենք չենք խախտում որևէ կանոն

ԱՅՈ → Հրաժարվում կամ մերժում ենք

ՈՉ

Արդյոք որևէ սկզբունք սպառնալիքի տակ չէ

ԱՅՈ → Արդյո՞ք սպառնալիքները նշանակալի են

ՈՉ → Շարունակում ենք

ԱՅՈ

Արդյո՞ք կան մեղմացուցիչ հանգամանքներ

ԱՅՈ → Շարունակում ենք

ՈՉ → Հրաժարվում կամ մերժում ենք

ՈՉ → Շարունակում ենք

Ինչ է նշանակում լինել պրոֆեսիոնալ

Պրոֆեսիոնալիզմի էությունը հանգում է հետևյալ հիմնական գաղափարին.” Դա այն աշխատանքը չէ, որ դու անում ես, այլ, թե ինչպես ես անում քո աշխատանքը”:
Մենք մեր աշխատողներից պահանջում ենք պրոֆեսիոնալիզմի դրսևորում, ինչպես նաև տեսական և պրակտիկ գիտելիքներով զինվածություն:
Պրոֆեսիոնալիզմի տակ մենք հասկանում ենք հետևյալը.

1. Քո պարտականությունների կատարում քո առավելագույն հնարավորության սահմաններում
2. Քո հմտությունների և գիտելիքների պարբերական թարմացում
3. Հոգածություն այն հետևանքների վերաբերյալ, որոնք հետևանք են քո որոշակի գործողությունների կամ անգործության
4. Քո առջև դրված ժամկետներում առաջադրանքը կատարելու ունակություն՝
5. Հարգալից վերաբերմունքի ցուցաբերում քո հաճախորդների, ղեկավարների և անձնակազմի բոլոր անդամների նկատմամբ

Մեր սկզբունքները

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

Ազնվության գաղափարը ենթադրում է մշտապես ճիշտ գործողություններ կատարել: AN AUDIT-ի անձնակազմից ակնկալվում է ազնիվ, հավատարիմ, ուղղամիտ և անկեղծ վարքագիծ բոլոր անձնական և գործարար հարաբերություններում: Մենք ակնկալում ենք գերազանցել մեր պատվիրատուների սպասելիքները՝ ձգտելով անել ոչ թե այն, ինչ օրինական է, այլ այն, ինչ ճիշտ է: Մենք թույլ չենք տալիս, որպեսզի մեր առևտրային շահերը գերակայեն մեր մասնագիտական և էթիկական պարտականությունները:

ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Մեր հաճախորդների հետ հարաբերություններ հաստատելիս AN AUDIT_ի քաղաքականությունը խրախուսում է լինել ուղղամիտ և անկախ բոլոր որոշումներում:

Կանխակալությունը, կողմնակալությունը, շահերի բախումը կամ այլ անձանց անպատեհ ազդեցությունը չպետք է ազդի մեր օբյեկտիվության և մասնագիտական դատողության վրա:

Մեզ համար ոչ մի պատվիրատու առավել կարևոր չէ, քան AN

AUDIT-ի անկախությունը, ազնվությունը և համբավը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ և ՊԱՏՇԱՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Մենք շարունակաբար ձգտում ենք բարելավել մեր հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակը և ցուցաբերել պատշաճ վերաբերմունք՝ հաճախորդի կարիքները համաձայնեցնելով մեր անձնակազմին այնպես,

որ այն օժտված լինի համապատասխան տեխնիկական հմտություններով և լինի իրազեկ տվյալ ոլորտում իր առաջադրանքը կատարելու համար:

ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Արգելվում է գաղտնի տեղեկատվության բացահայտումը ինչպես ընկերության ներսում, այնպես էլ ընկերությունից դուրս՝ առանց համապատասխան իրավական կամ մասնագիտական պարտականության կամ իրավունքի:
- Հաճախորդների, ընկերության և մեր անձնակազմի վերաբերյալ գաղտնի տեղեկությունները չի կարելի օգտագործել անձնական շահ կամ առավելություն կամ երրորդ անձնաց համար շահ կամ առավելություն ապահովելու համար:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ

- Մենք հետամուտ ենք լինում մասնագիտական ստանդարտներին և գործող օրենքներին և իրավական ակտերին:
- Մենք խուսափում ենք այնպիսի գործողություններից կամ իրավիճակներից, որոնք կարող են վակաբեկել մեր ընկերության և մեր մասնագետների համբավը:
- Մենք ձեռնպահ ենք մնում այլոց աշխատանքի վերաբերյալ արհամարհական, քամահրական կամ նվաստացնող բնույթի արտահայտություններից կամ անհիմն համեմատություններից:

ՀՆԱՐԱՎՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

- Անձնական շահի
- Ինքնաստուգման
- Շահերի պաշտպանության
- Ստերմության
- Ահաբեկման

ԱՆՁՆԱԿԱՆ ՇԱՀԻ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Անձնական շահի սպառնալիքը կարող է ծագել հետևյալ հանգամանքներում.

- Եթե մեր աշխատակիցը կամ նրա ընտանիքի մտերիմ անդամը՝
  - փոխառություն կամ երաշխավորություն է ստացել կամ տվել մեր հաճախորդին
  - Հաճախորդի հետ գտնվում է մտերիմ անձնական կամ գործարար հարաբերություններում
  - Ունի ֆինանսական շահեր հաճախորդի մոտ
  - Բանակցությունների մեջ է հաճախորդի հետ նրա մոտ աշխատանքի ընդունվելու հարցով
  - Ընդունում է նվեր կամ հյուրասիրություն, որի արժեքը գերազանցում է 30,000 ՀՀ դրամը
- Եթե մեկ աուդիտի հաճախորդին մատուցված ծառայությունների տարեկան վճարը գերազանցում է Ընկերության տարեկան ընդհանուր վճարների 15%-ը, իսկ ցուցակված ընկերությունների դեպքում 10%-ը:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Ինքնաստուգման սպառնալիքը կարող է ծագել հետևյալ դեպքերում.

- Եթե մենք ստուգում ենք այնպիսի տեղեկատվություն կամ փաստաթղթեր, որոնք պատրաստվել են մեր կողմից:
- Եթե մենք մասնակցել ենք աուդիտի հաճախորդի ներքին վերահսկողության և հաշվապահական հաշվառման համակարգի ներդրմանը:
- Եթե աուդիտորական թիմի անդամներից որևէ մեկը գտնվել է հաճախորդի մոտ այնպիսի պաշտոնում, որը հնարավորություն է ունեցել ազդելու ֆինանսական հաշվետվությունների պատրաստման վրա:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Շահերի պաշտպանության սպառնալիքը կարող է ծագել հետևյալ հանգամանքներում.

- Եթե մենք հրապարակայնորեն պաշտպանում ենք մեր հաճախորդին չնայած այն փաստին, որ մեր ունեցած փաստերը ամբողջական չեն կամ փաստերն անօրինական են.
- Եթե մենք հանդես ենք գալիս որպես մեր հաճախորդի փաստաբան կամ շահերի պաշտպան դատարանում կամ երրորդ անձանց հետ վեճերում.
- Եթե մենք նպաստում ենք մեր հաճախորդի բաժնետոմսերի առաջխաղացմանը:

ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Մտերմության սպառնալիքը կարող է ծագել հետևյալ հանգամանքներում.

- Եթե մենք (ներառյալ մեր տիմի անդամի ընտանիքի մոտ անդամը) հաճախորդի ղեկավարության հետ գտնվում ենք չափազանց մտերմիկ հարաբերություններում.
- Եթե մենք հաճախորդին 10 տարուց ավել ժամկետով աուդիտորական ծառայություն ենք մատուցում:

ԱՀԱԲԵԿՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Ահաբեկման սպառնալիքը կարող է ծագել հետևյալ հանգամանքներում.

- Եթե մեզ վախեցնում են, որ չեն վերանշանակի մեզ որպես հաջորդ տարվա աուդիտոր կամ մեզ չեն պատվիրի պլանավորած ոչ աուդիտորական ծառայությունները.
- Եթե մեզ չեն վճարել նախորդ տարվա աուդիտորական վճարի որոշ մաս, իսկ մենք արդեն սկսել ենք հաշվետու տարվա աուդիտը:

Վարվեցողության կանոնների խախտման համար պատասխանատվությունը

Յուրաքանչյուր ոք, ով խախտում է մեր վարվեցողության կանոնները, ենթարկվում է պատասխանատվության՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատում առանց պաշտոնի և դիրքի խտրականության: Աշխատակիցների հետևյալ գործողությունները ենթակա են պատաասխանատվության միջոցների կիրառման.

1. Օրենքների խախտումը կամ AN AUDIT-ի կանոնների խախտումը
2. Այլ անձանց դրդումը կամ խրախուսումը խախտել օրենքները կամ AN AUDIT-ի կանոնները
3. Օրենքների կամ AN AUDIT-ի կանոնների խախտման վերաբերյալ ցանկացած փաստացի կամ կասկածելի փաստի վերաբերյալ չզեկուցելը
4. Որևէ մտավախություն կամ հարց բարձրացնելու կամ զեկուցելու համար այլ անձանց նկատմամբ վրեժխնդիր լինելը

Իսկ դու տվե՞լ ես քեզ այս հարցերը

1. Արդյոք քո գործողությունները չեն հակասում “ Էյ-Էն Աուդիտ” ՓԲԸ-ի կանոններին
2. Արդյոք դու չես վարկաբերում “ Էյ-Էն Աուդիտ” ՓԲԸ-ի համբավը
3. Արդյոք քո քայլերն օրինական են և համապատասխանում են մասնագիտական ստանդարտներին
4. Արդյոք դու ուրիշների նկատմամբ վարվում ես այնպես, ինչպես, որ դու կցանկանայիր, որ քեզ հետ վարվեին
5. Ինչպես քո քայլերը կընդունվեն հասարակության կողմից
6. Դու կարողանու՞մ ես գիշերները հանգիստ քնել...